



Քաղաքացի գիտնականների ներգրավվածության տասը սկզբունքներ

«Քաղաքացի գիտնականներ»-ը (Citizen science) ճկուն հայեցակարգ է, որը կարող է համապատասխանեցվել և կիրառվել տարբեր իրավիճակներում ու գիտակարգերում: Ստորև բերված դրույթները մշակվել են Եվրոպայի քաղաքացի գիտնականների ասոցիացիայի "Լավագույն փորձի և կարողությունների զարգացման" աշխատանքային խմբի կողմից՝ Լոնդոնի Բնական պատմության թանգարանի գլխավորությամբ և հաշվի առնելով ասոցիացիայի բազմաթիվ անդամների ներդրումը: Այն նպատակ ունի սահմանել որոշ առանցքային սկզբունքներ, որոնք, ըստ ասոցիացիայի համայնքի՝ քաղաքացի գիտնականների ներգրավվածության լավագույն փորձի նախապայմանն են:

1. «Քաղաքացի գիտնականների» մասնակցությամբ նախագծերը ակտիվորեն ներգրավում են քաղաքացիներին գիտական ասպարեզում, ինչը խթանում է նոր գիտելիքների կամ ըմբռնման ձևավորմանը: Քաղաքացիները կարող են հանդես գալ որպես աջակիցներ, համագործակցողներ կամ որպես ծրագրի ղեկավարներ և նշանակալի դեր ունենալ նախագծում:
2. «Քաղաքացի գիտնականների» մասնակցությամբ նախագծերն ունեն իրական գիտական արդյունք, ինչպես օրինակ՝ պատասխանել հետազոտական հարցերին կամ ներդրում ունենալ կիրառական հարցերի մեջ, ինչպիսին է բնության պահպանության, կառավարման ոլորտը կամ շրջակա միջավայրին ուղղված քաղաքականությունը:
3. Ե՛վ պրոֆեսիոնալ գիտնականները, և՛ «քաղաքացի գիտնականները» շահում են մասնակցության գործընթացից, ինչը կարող է ներառել հետազոտական արդյունքների հրապարակումը, ուսուցման հնարավորությունները, անձնական հետաքրքրությունը, սոցիալական հաղորդակցությունը, և գիտական արդյունքներին նպաստելու այն գոհունակությունը, որոնք կարող են ներուժ ունենալ ազդելու տեղական, ազգային և միջազգային խնդիրների լուծման, և դրա միջոցով՝ քաղաքականության վրա:
4. Քաղաքացի գիտնականները, ցանկության դեպքում, կարող են մասնակցել գիտական գործընթացի տարբեր փուլերին: Այն կարող է ներառել հետազոտական հարցի մշակումը, մեթոդների նախագծումը, տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, ինչպես նաև արդյունքների հրապարակումը:
5. Քաղաքացի գիտնականները նախագծից արձագանք են ստանում, օրինակ, այն հարցի շուրջ, թե ինչպես են օգտագործվում նրանց կողմից հավաքագրված տվյալները և որոնք են դրանց հետազոտական, քաղաքական կամ հասարակական արդյունքները:



6. **Քաղաքացի գիտնականների ներգրավվածությունը համարվում է հետազոտական մոտեցում, և, ինչպես ցանկացած այլ հետազոտություն, այն ունի իր սահմանափակումներն ու նախապաշարումները, որոնք պետք է հաշվի առնել և վերահսկել:** Այնուամենայնիվ, ի տարբերություն ավանդական հետազոտական մոտեցումների՝ քաղաքացի գիտնականի մասնակցությունը ավելի մեծ հանրային ներգրավվածության և գիտության ժողովրդավարացման հնարավորություն է ընձեռում:
7. **Քաղաքացի գիտնականների ներգրավմամբ իրականացվող ծրագրի տվյալները և մետատվյալները հասանելի են դառնում հանրությանը, և հնարավորության դեպքում արդյունքները հրապարակվում են բաց հասանելիության ձևաչափով:** Տվյալների փոխանակումը կարող է տեղի ունենալ ծրագրի ընթացքում կամ դրանից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց փոխանակումը կանխող անվտանգության կամ գաղտնիության հետ կապված մտահոգություններ չկան:
8. **Քաղաքացի գիտնականները հիշատակվում են ծրագրի արդյունքներում և հրապարակումներում:**
9. **Քաղաքացի գիտնականների մասնակցությամբ ծրագրերը գնահատվում են ըստ իրենց գիտական արդյունքի, տվյալների որակի, մասնակիցների փորձի և հասարակության կամ քաղաքականության վրա լայնամասշտաբ ազդեցության:**
10. **Քաղաքացի գիտնականների մասնակցությամբ նախագծերի ղեկավարները հաշվի են առնում իրավական և էթիկական խնդիրները՝ կապված հեղինակային իրավունքի, մտավոր սեփականության, տվյալների փոխանակման համաձայնագրերի, գաղտնիության, վերագրման և շրջակա միջավայրի վրա ազդեցությանը վերաբերող ցանկացած գործունեության հետ:**

Թարգմանությունն իրականացվել է ՕԹԹԸՐՄ - "Սոցիալական վերափոխում ջրային տնտեսության ոլորտում" «քաղաքացի գիտնականների» ներգրավման միջոցով"(OTTERS - Social Transformation Through Scaling up Citizen Science) ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի աշխատակիցների կողմից:

Երևան, 2024 թ.
հունիս